



## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/153/2025

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

23 հունիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ՝ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արմեն Մարությանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի հունիսի 23-ին քննելով ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենի համայնքի ղեկավար՝ Հուսիկ Օնիկի Սահակյանի ընտանիքի անդամ Անահիտ Սերյոժայի Պողոսյանի կողմից պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2022 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/153/2025 վարչական գործը՝

### ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով՝ Oragir.news կայքում 2025 թվականի ապրիլի 4-ի «7 անշարժ գույք, 2 մլն անկանխիկ, 5 մլն կանխիկ, 25 մլն եկամուտ. Արենիի համայնքապետի և նրա կնոջ ունեցվածքը» վերտառությամբ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների հիման վրա, իրականացրել է Արենիի համայնքի ղեկավար՝ Հուսիկ Օնիկի Սահակյանի ընտանիքի անդամ Անահիտ Սերյոժայի Պողոսյանի կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերում հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը.

1) Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային շտեմարանից ստացված տվյալների համաձայն՝ միանձնյա սեփականության իրավունքով Անահիտ Պողոսյանին են պատկանում՝

- 2020 թվականի մարտի 16-ին ձեռք բերված ՀՀ Երևան, Նուբարաշեն, Նուբարաշենի 11-րդ փողոց, 9 շենք, 39 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը.
- 2014 թվականի մայիսի 14-ին ձեռք բերված Երևան, Էրեբունի, Նոր Արեշ 14-րդ փողոց, 40 շենք, 48 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը,

մինչդեռ նշված անշարժ գույքերի վերաբերյալ տվյալները հայտարարագրված չեն Հայտարարագրի «Բ.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» բաժնում:

2) 2020 թվականի մարտի 16-ին Անահիտ Պողոսյանի և Արա Զիլինգարյանի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր, որով ք.Երևան, Նուբարաշենի 11-րդ փողոց, 9 շենք, 39 հասցեում գտնվող բնակարանը տրվել է վարձակալությամբ՝ ամսական 85,000 ՀՀ դրամ արժեքով:

Ըստ այդ պայմանագրի բնակարանի վարձակալությունից Անահիտ Պողոսյանի ստացած եկամուտները 2022 թվականին կազմել են 1,020,000 ՀՀ դրամ, մինչդեռ Հայտարարագրում վարձակալությունից ստացված եկամուտ հայտարարագրված չէ:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի

հատկանիշներ և 2025 թվականի հունիսի 16-ին Անահիտ Պողոսյանին թիվ 01/2437-2025 գրությամբ ծանուցել է վերջինիս Հայտարարագրում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 11:00-ին Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 15:00-ին գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Անահիտ Պողոսյանը ստացել է 2025 թվականի հունիսի 6-ին, ինչը բանավոր հաստատել է վերջինիս ներկայացուցիչ Նորայր Գրիգորյանը:

1.3 2025 թվականի հունիսի 19-ին Անահիտ Պողոսյանի ներկայացուցչի՝ Նորայր Գրիգորյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 103/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Անահիտ Պողոսյանի ներկայացուցիչը՝ Նորայր Գրիգորյանի ներկայությամբ 2025 թվականի հունիսի 23-ին, ժամը՝ 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

## **II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ.**

Անահիտ Պողոսյանը Հանձնաժողով է ներկայացրել պարզաբանում, որտեղ նշել է՝ «(...) Երևան, Նուբարաշեն, Նուբարաշենի 11-րդ փողոց, 9 շենք, 39 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը իմ կողմից ձեռք է բերվել 2008 թվականին, ուստի 2020 թվականի մարտի 16-ի ամսաթվով անշարժ գույք հնարավոր չէր լրացնել, այլ լրացվել է որպես 2008 թվականին ձեռք բերված անշարժ գույք: Նույն խնդիրն է նաև կապված Երևան, Էրեբունի, Նոր Արեշ 14-րդ փողոց, 40 շենք, 48 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի հետ: (Կցվում են անշարժ գույքերի սեփականության վկայականների պատճենները) (...):»

Անդրադառնալով 2-րդ կետին Անահիտ Պողոսյանը նշել է՝ «(...) նշված վարձակալական վճարը առաջացել է Երևան, Նուբարաշեն, Նուբարաշենի 11-րդ փողոց, 9

շենք, 39 բնակարանի վարձակալության հիմունքներով տրամադրելուց, որի պայմանագիրը կցվում է: (...)»:

Արձանագրությունը կազմելու, ինչպես նաև գործի քննության ընթացքում Անահիտ Պողոսյանի ներկայացուցիչը՝ Նորայր Գրիգորյանը տվել է բացատրություն, ըստ որի Հայտարարագրի տվյալները լրացվել են իր կողմից, այդ գույքերի վկայականները առկա են եղել իր բջջային հեռախոսում, չլրացնելը հավանաբար թյուրիմացության արդյունք է եղել, իսկ հաջորդիվ ներկայացվող Հայտարարագրում էլ սխալմունքը կայանում է նրանում, որ տվյալները վերցրել է նախորդիվ ներկայացված հայտարարագրերից, այդ պատճառով էլ սխալմունքը կրկնվել է:

Անշարժ գույքի վարձակալությունից եկամուտների ստացած լինելու փաստի վերաբերյալ նշել է, որ թեև կնքված է եղել վարձակալության պայմանագիր անորոշ ժամկետով, սակայն 2021 թվականից հետո նշված գույքը փաստացի վարձակալության չի տրվել, որևէ եկամուտ չի ստացվել, այդ պատճառով էլ նման տվյալներ չեն հայտարարագրվել, մինչդեռ վարձակալության պայմանագիրը չի լուծվել:

### **III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր.**

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/153/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Հայտարարագրի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները» բաժնի տվյալների համաձայն՝ Անահիտ Սերյոժայի Պողոսյանը հանդիսանում է ՀՀ Վայոց Ձորի մարզի, Արենի համայնքի ղեկավար՝ Հուսիկ Օնիկի Սահակյանի ընտանիքի անդամը:

3.2 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Անահիտ Սերյոժայի Պողոսյանը հանդիսանում է հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 Անահիտ Պողոսյանին 2014 թվականի մայիսի 14-ից և 2020 թվականի մարտի 16-ից սեփականության իրավունքով պատկանում են համապատասխանաբար ք. Երևան,

Էրեբունի, Նոր Արեշ 14-րդ փողոց, 40 շենք, 48 բնակարան և ք. Երևան, Նուբարաշեն, Նուբարաշենի 11-րդ փողոց, 9 շենք, 39 բնակարան հասցեներում գտնվող անշարժ գույքերը: Մինչդեռ նշված անշարժ գույքերի վերաբերյալ տվյալները չեն հայտարարագրվել Հայտարարագրի «Բ.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» բաժնում:

3.4 2020 թվականի մարտի 16-ին Անահիտ Պողոսյանի և Արա Զիլինգարյանի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր, որով Երևան, Նուբարաշեն, Նուբարաշենի 11-րդ փողոց, 9 շենք, 39 հասցեում գտնվող բնակարանը տրվել է վարձակալությամբ՝ ամսական 85,000 ՀՀ դրամ արժեքով, մինչդեռ գույքի վարձակալությունից ստացված վարձավճարը Հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում չի հայտարարագրել որպես ստացված եկամուտ:

#### **IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.**

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույք:

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 13-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից

հայտարարագրում անզգուշությամբ **սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Վարչական իրավախախտումների վերաբերյալ՝ ՀՀ օրենսգրքով 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ **վարչական իրավախախտման դեպքի** կամ կազմի **բացակայությունը**:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր

հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

**Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.**

1-ին կետում նշված խախտման առնչությամբ Հանձնաժողովի երկու անդամները՝ Ա. Մարուխյանը և Լ. Ալեքսանյանը գտնում են, որ իրավախախտումն ունի էական նշանակություն, քանի որ նշված տվյալների չհայտարարագրման պարագայում հայտարարատու անձի գույքային դրությունը ամբողջությամբ չի բացահայտվել: Հանձնաժողովի մյուս անդամը՝ Մ. Գալստյանը, նշեց, որ հիմք ընդունելով Անահիտ Պողոսյանի կողմից 2019 և 2024 թվականների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրերում նշված գույքերի վերաբերյալ տվյալների հայտարարագրված լինելու հանգամանքը, արձանագրված իրավախախտումը գնահատում է նվազ նշանակություն ունեցող:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի եզրակացություններն ու որոշումներն **ընդունվում են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:**

Հանձնաժողովն 1-ին կետի առնչությամբ **արձանագրեց.**

2025 թվականի հունիսի 4-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության և մյուս նյութերի հիման վրա Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված նշված իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում, Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնություն ապահովված չլինելու հանգամանքով պայմանավորված, կոլեգիալ մարմնի կողմից քննվող 1-ին կետում նշված վարչական իրավախախտման վերաբերյալ որոշում չի կայացվում:

2-րդ կետում նշված իրավախախտման առնչությամբ Հանձնաժողովը, հիմք ընդունելով վարույթի մասնակցի կողմից ներկայացված պարզաբանումը, համաձայն որի 2021 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 2023 թվականը վերը նշված անշարժ գույքը վարձակալության հանձնված չի եղել, հետևաբար Անահիտ Պողոսյանը վարձակալության համար եկամուտ չի ստացել, այդ իսկ պատճառով չի հայտարարագրել այդ տվյալները, արձանագրում է, որ գործը ենթակա է կարճման դեպքի բացակայության հիմքով:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածով, Հանձնաժողովը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/153/2025 վարչական գործի վարույթը 2-րդ կետով արձանագրված խախտման մասով կարճել՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Սերյոժայի Պողոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Անահիտ Սերյոժայի Պողոսյանին տրամադրել եռօրյա ժամկետ 2021, 2022 և 2023 թվականների գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրերի համապատասխան բաժիններում ուղղումներ կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

**ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**